Տեղեկատու թիվ 02 (փետրվար 2022թ.)
Newsletter N 02

Հայ դատի Կենտրոնական Խորհուրդ

Հայ դատի ամփոփագիր, փետրվար 2022թ.

Visit our website

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

50+ U.S. Representatives Tell Biden Administration to Stop Sale of F-16s to Turkey

A bipartisan group of over 50 U.S. Representatives joined Congressional Armenian Caucus Co-Chair Frank Pallone (D-NJ) and Hellenic Caucus Co-Chair Gus Bilirakis (R-FL) in pressing the U.S. Departments of State and Defense to block the sale of next-generation U.S. F-16 fighter jets and upgrade kits to Turkey President Erdogan's increasingly hostile regime, reported the Armenian National Committee of America. "We strongly urge you to reject Turkey's request for new F-16s and modernization kits and take immediate action to hold the Erdogan regime accountable," states the February 4th Congressional letter addressed to

Secretary of State Antony Blinken and Secretary of Defense Lloyd Austin. “The United States must not provide any further support to Turkey’s military until President Erdogan takes tangible steps to halt his destabilizing actions and violations of international law at home and abroad. Precedent shows that he will not change his behavior until the United States uses all its diplomatic tools, including targeted economic sanctions.”

Text Link

52 կոնգրեսական միացել է Հայ Դատի Ամերիկայի հանձնախմբի նախաձեռնությանը

ԱՄՆ-ի ավելի քան 52 կոնգրեսականից բաղկացած երկկուսակցական խումբը միացել է Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ֆրենկ Փալոնին և Գաս Բիլիրակիսին՝ ԱՄՆ Պետքարտուղարությունից և պաշտպանության նախարարությունից պահանջելով արգելափակելու չորրորդ սերնդի F-16 կործանիչների և արդիականացման սարքավորումների վաճառքը Թուրքիային: Այս մասին հայտնում է Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը: Փետրվարի 4-ին պետքարտուղար Էնթոնի Բլինքենին և պաշտպանության նախարար Լլոյդ Օսթինին ուղղված նամակում ասվում է. «Մենք խստորեն կոչ ենք անում մերժել Թուրքիայի խնդրանքը՝ նոր F-16-երի և արդիականացման սարքավորումների վերաբերյալ, և անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ Էրդողանի վարչակարգին պատասխանատվության ենթարկելու համար: Միացյալ Նահանգները չպետք է հետագայում որևէ աջակցություն ցուցաբերի Թուրքիայի զինված ուժերին, քանի դեռ նախագահ Էրդողանը շոշափելի քայլեր չի ձեռնարկել՝ դադարեցնելու իր ապակայունացնող գործողությունները և միջազգային իրավունքի խախտումները երկրում և արտերկրում»:

Text Link

Կալիֆոռնիայի և Սյունիքի միջև հաստատվել են «քույր-նահանգային» հարաբերություններ

Հայ դատի ԱՄՆ Արևմտյան ափի հանձնախմբի ջանքերի արդյունքում փետրվարի 10-ին Կալիֆոռնիայի նահանգային Սենատն ընդունել է բանաձև, որով Կալիֆոռնիայի և ՀՀ Սյունիքի մարզի միջև հաստատվում են նահանգային-մարզային համագործակցության հարաբերություններ: Կալիֆոռնիայի օրենսդիր մարմնի 62 անդամ հանդես է եկել որպես հիշյալ բանաձևի համահեղինակ:

Ընդունված բանաձևով Կալիֆոռնիան համերաշխություն է հայտնում ՀՀ Սյունիքի մարզին, դրանով նաև ենթադրվում է իրականացնել երկուստեք փոխշահավետ կրթական, տնտեսական և մշակութային փոխանակումներ:

Text Link

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը դատապարտել է հոլիվուդյան դերասան

Մորգան Ֆրիմանին՝ թուրքական ավիաընկերության գովազդում նկարվելու համար

Հայ դատի Ամերիկայի գրասենյակը հրապարակված տեսանյութով խստորեն դատապարտել է հոլիվուդյան աշխարհահռչակ դերասան Մորգան Ֆրիմանին՝ թուրքական ավիաընկերության գովազդում նկարվելու համար։
Ֆրիմանի ու թուրքական ընկերության միջև ձեռք էր բերվել համատեղ տեսանյութ հրապարակելու հարցում։

Text Link

Հայ դատի Եվրոպայի հանձնախումբ

«Արցախի արտգործնախարարի այցը Բրյուսել կարևորում ենք նաև այն պատճառով, որ սա հետպատերազմյան փուլում ԵՄ մայրաքաղաք նրա առաջին այցն էր», ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի գրասենյակի նախագահ

ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի գրասենյակի և Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության համատեղ նախաձեռնությամբ և ջանքերով փետրվարի 7-10 տեղի ունեցավ Ա.Հ. արտգործնախարար Դավիթ Բաբայանի աշխատանքային այցը Բրյուսել։
Այցի ընթացքում վերակազմվեց Եվրոպական Խորհրդարանում (ԵԽ) Արցախի հետ բարեկամության խումբը՝ գլխավոր քաղաքական խմբակցություններից պատգամավորների լայն շրջանակի մասնակցությամբ։ Եվրապատգամավորներին հանգամանորեն ներկայացվեց 2020 թ. Ադրբեջանի սանձազերծած պատերազմից հետո Արցախում ստեղծված իրավիճակն ու մարտահրավերները, Ադրբեջանի ագրեսիվ քաղաքանությունը, որի հիմքում տասնամյակներով Ադրբեջանում պետական հովանավորչությամբ քարոզվող և խորապես արմատացած հայատյացությունն է։
Ա.Հ. Արտգործնախարարը հանդիպումներ ունեցավ Բելգիայի Դաշնային Խորհրդարանում Հայաստանի և Վրաստանի բարեկամության խմբի անդամ-սենատորների, Բելգիայում Արցախի հետ ֆրանսախոս բարեկամության շրջանակի, ինչպես նաև Ֆլամանդական Խորհրդարանում Արցախի հետ բարեկամության խմբի անդամների հետ։ Նախարարը նաև դասախոսություն կարդաց Արցախյան հիմնախնդրի, ինչպես նաև ստեղծված իրավիճակի վերաբերյալ՝ Գերմանիայի առաջատար իրավաբանական համալսարանի մի քանի տասնյակ ուսանողների համար, ովքեր այցով գտնվում էին Բրյուսելում։ Այցն ամփոփվեց Բելգիայի Հայ համայնքի ներկայացուցչական մարմինների անդամների հետ հանդիպումով։

Text Link

«Այս բանաձևով Եվրախորհրդարանը սկզբունքային շեշտադրումներ է անում՝ ի

հեճուկս Ադրբեջանի՝ իրականությունը խեղաթյուրելու ջանքերի», ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյան

Եվրոպական Խորհրդարանի (ԵԽ) լիագումար նիստը երեկ հաստատեց ԵՄ «Ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքականության» տարեկան բանաձևը, որը դեռևս 2021 դեկտեմբերի 20-ին ընդունել էր ԵԽ Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը։
Արցախյան հակամարտությանը վերաբերող դրույթները ԵԽ բանաձևում ըստ էության մնացին անփոփոխ ։ Եվրախորհրդարանը հաստատում է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը շարունակում է մնալ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման միջազգայնորեն ճանաչված միակ ֆորմատը՝ ազգերի ինքնորոշման, տարածքային ամբողջականության, ուժի չկիրառման և խնդրի խաղաղ կարգավորման հիմնարար սկզբունքների հիման վրա։ ԵԽ-ն կոչ է անում Մինսկի խմբին անհապաղ և կրկին ստանձնել միջնորդի իր դերը։ Եվրախորհրդարանը նաև հորդորում է ԵՄ գործադիր մարմիններին՝ մասնավորապես Բարձր ներկայացուցչին, և ԵՄ անդամ-պետություններին ակտիվորեն ներգրավվել ԼՂ հիմախնդրի շուրջ տևական լուծում գտնելու գործում։

Text Link

Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբ

Federal and State Parliamentarians to join Armenian National Committee of Australia Annual Gala next Saturday

Australia's Minister for Communications, Urban Infrastructure, Cities and the Arts, Hon. Paul Fletcher MP and Deputy Leader of the Opposition in the Senate, Senator Hon. Kristina Keneally will headline the list of Federal, State and Local Government dignitaries at the Armenian National Committee of Australia's Annual Gala at the Museum of Contemporary Art in Sydney on Saturday 19th February 2022.
The postponed 2021 Gala of the Armenian-Australian community's peak public affairs body will also feature guests including Federal parliamentarians Trent Zimmerman MP, John Alexander MP, Jason Falinski MP and Senator Deborah O'Neill.
They will be joined by New South Wales Ministers Hon. Damien Tudehope MLC, Hon. Mark Coure MP and Hon. Natalie Ward MLC and their state parliamentary counterparts, Legislative Assembly Speaker Hon. Jonathan O'Dea MP, Shadow Minister for Police Hon. Walt Secord MLC and Dr. Hugh McDermott MP.

Text Link

Leaders of counterpart parliamentary friendship groups from Australia and Armenia meet

On Monday 21st February 2022, Co-Chairs of the Armenia-Australia Inter-Parliamentary Union (Friendship Group), Trent Zimmerman MP and Joel Fitzgibbon MP met with the Chair of the Armenia-Australia Friendship Group in Armenia's National Assembly, Ishkhan Saghatelyan MP, reported the Armenian National Committee of Australia (ANC-AU).
The meeting was the first virtual dialogue held between the leaders, following the re-establishment of the Armenia-Australia Friendship Group by the National Assembly of Armenia, following which Deputy Speaker Saghatelyan was nominated to lead.
The meeting, organised by the Armenian National Committee of Australia (ANC-AU), was used as an opportunity for the leaders of each friendship group to meet and update one another on the key priorities of their respective nations.

Text Link

The Armenian National Committee of Australia's (ANC-AU) Annual Gala raised $170,000 to advance Armenian-Australian issues in public affairs

The Armenian National Committee of Australia's (ANC-AU) Annual Gala raised $170,000 to advance Armenian-Australian issues in public affairs, as Government Minister Paul Fletcher MP was honoured with the organisation's Freedom Award, Shadow Minister Senator Kristina Keneally received the Armenian Community Friend of the Year Award and veteran journalist Michael Brissenden was presented with the Ben Bagdikian Media Award for 2021.
The 2021 Annual Gala, delayed due to Covid restrictions, was held at the glitzy Museum of Contemporary Art on Saturday 19th February 2022. The masters of ceremonies were ANC-AU Political Affairs Director Michael Kolokossian and ANC-AU Executive Administrator Sarine Soghomonian.

Text Link

Հայ դատի Հունաստանի հանձնախումբ

Յունաստանի Հայ դատի նամակը Ե.Ա.Հ.Կ.-ի յոյն երեսփոխաններուն

Հ.Յ.Դ. Յունաստանի Հայ դատի յանձնախումբը բաց նամակ մը ուղարկած է Ե.Ա.Հ.Կ.-ի մօտ Յունաստանի երեսփոխանական պատուիրակութեան անդամներուն, դատապարտելով Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի սպառնալիքները Հայաստանի դէմ եւ կոչ ուղղելով Ե.Ա.Հ.Կ.-ին միջազգային օրէնքներուն ենթարկելու Ատրպէյճանն ու անոր նախագահը։
Հայ դատի յանձնախումբի նամակին մէջ մասնաւորապէս գրուած է.
«Հայաստանն ու Արցախը թիրախաւորելէ ետք, Ատրպէյճանի նախագահը այս անգամ կը յարձակի Ե.Ա.Հ.Կ.-ի Մինսքի խումբի համանախագահող երկիրներուն վրայ, որոնք յանձն առած են Արցախի հիմնահարցի լուծման բանակցային գործընթացը։

Text Link

Հայ դատի Լիբանանի հանձնախումբ

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը Ալիեւի՝ Արցախի բռնագրաւեալ տարածքին մէջ մշակութային ցեղասպանութիւն գործելու մտադրութեան վերաբերեալ նամակներ յղեց շարք մը երկիրներու դեսպաններուն

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը երէկ Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի, Ռուսիոյ, Եւրոպական Միութեան, Լեհաստանի, Շուէտի եւ Վատիկանի դեսպաններուն, ինչպէս նաեւ ԵՈՒՆԵՍՔՕ-ի Պէյրութի մէջ գտնուող շրջանային գրասենեակի տնօրէնին յղեց նամակներ, որոնց մէջ անդրադարձաւ Ազրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի եւ մշակոյթի նախարար Անար Քարիմովի կողմէ Արցախի բռնագրաւեալ տարածքներուն մէջ մշակութային ցեղասպանութիւն գործելու բացայայտ ու յստակ մտադրութեան եւ այդ ծրագրի գործադրութեան համար «աշխատանքային խմբակ» յառաջացնելու որոշումին:

«Յստակ է, որ վերոնշեալ աշխատանքային խմբակը ստեղծելու նպատակը Արցախի բռնագրաւուած տարածքներուն մէջ գտնուող հայկական եկեղեցիներէն հայկական հետքերը ջնջելն է: Այս խմբակին առաքելութիւնը գործադրելն է ազրպէյճանական բռնատիրութեան՝ հայկական մշակութային ժառանգութենէն հայկական հետքերը ջնջելու որոշումը, այդպիսով փորձելով ոչնչացնել պատմամշակութային կոթողները, որոնք անհերքելի կերպով կը վկայեն, թէ Լեռնային Ղարաբաղը պատմականօրէն մաս կազմած է Հայաստանին, եւ մշակութային ցեղասպանութիւն գործել:

Text Link

ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի մարմինը ողջունեց ԵՈՒՆԵՍՔՕ-ի մամլոյ գրասենեակի աշխատակիցին յայտարարութիւնը

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը երէկ լիբանանեան լրատուամիջոցներուն յղեց հաղորդագրութիւն մը՝ ողջունելով ԵՈՒՆԵՍՔՕ-ի մամլոյ գրասենեակի աշխատակից Թոմաս Մալարտի յայտարարութիւնը, որ կը վերաբերէր Ազրպէյճանի մշակոյթի նախարար Անար Քերիմովի 3 փետրուարին կատարած այն յայտարարութեան, թէ Ազրպէյճանի մէջ ձեւաւորուած է «տեղացի եւ օտարերկրացի մասնագէտներէ» կազմուած «աղուանական պատմութեան եւ ճարտարապետութեան մասնագէտներու աշխատանքային խումբ», որուն նպատակն է այսպէս կոչուած «աղուանական տաճարներէն» ջնջել «հայերու ձգած կեղծ արձանագրութիւնները»: Մալարտ յայտարարեց. «Մշակութային ժառանգութիւնը եւ պատմութիւնը պէտք չէ քաղաքական որեւէ նպատակի համար գործիք դառնան: Մենք ամբողջ աշխարհի տարածքին մեր անդամ պետութիւններուն կոչ կ՛ուղղենք յարգելու այս սկզբունքը»: Ան նաեւ յայտնեց, թէ ԵՈՒՆԵՍՔՕ-ն կ՛աշխատի թեքնիք առաքելութիւն մը Արցախի Հանրապետութեան բռնագրաւեալ տարածքներ ուղարկելու ուղղութեամբ՝ աւելցնելով. «Յոյս ունինք, որ ատիկա շուտով կարելի պիտի ըլլայ, սակայն այս պահուն ատոր համար անհրաժեշտ պայմաններ չկան: Ուստի քննարկումները տակաւին կը շարունակուին»:

Text Link

Հայ դատի Սիրիայի հանձնախումբ

Սուրիոյ Հայ դատի յանձնախումբը խստիւ կը դատապարտէ Ատրպէյճանի կողմէ կիրառուած մշակութային ցեղասպանութիւնը Հայ ժողովուրդին նկատմամբ

Սուրիոյ Հայ Դատի Յանձախումբը իր մտահոգութիւնը կը յայտնէ Արցախեան վերջին պատերազմին հետեւանքով բռնագրաւուած հայկական հողերու մշակութային կոթողներու ճակատագրին գծով յատուկ յանձնախումբ ստեղծելու Ատրպէյճանի իշխանութիւններուն որոշումին համար, որ կը նպատակադրէ՝ հայկական սրբատեղիներու, պատմամշակութային կոթողներու եւ տեղանուններու նենգափոխումը, ինչպէս նաեւ շրջանի հայկական հետքերու ջնջումն ու այդ հարստութեան իւրացումը։

Տուեալ քայլը անգամ մը եւս կու գայ հաստատելու այն ակնյայտ փաստը, որ ատրպէյճանական իշխանութիւններու վերահսկողութեան տակ գտնուող հայկական մշակութային ժառանգութիւնը ենթակայ է իր պատմական արմատներէն պոկուելու իսկական վտանգին։ Սոյն արարքը միջազգային հանրութեան եւ փորձագիտական շրջանակներուն մօտ յստակ համոզում կը յառաջացնէ, թէ մշակութային եւ կրօնական կոթողներու, սրբատեղիներու ոչնչացումն ու սրբապղծումը ոտնձգութիւն են ժողովուրդներու արժանապատուութեան, իսկ Ատրպէյճան կը նպատակադրէ մէկընդմիշտ խափանել պատմական փորձութիւններուն դիմակայելու եւ զարգանալու հայ ազգին կարելիութիւնը։

Text Link

Հայ դատի Կենտրոնական խորհուրդ | +374-10-52-19-66 | www.ancnews.info